

Վարուժան Պօղոսեան, Հայոց Յեղասպանութեան Առաջին Փուլը Ֆրամսիական Պատմագրութեան Եւ Հասարակական-Քաղաքական Մորի Գնահատմամբ (ԺՌ. Դարի Վերջ-Ի. Դարի Ակիզը), Երկրորդ, բարեփոխուած Եւ լրացուած հրատարակութիւն, Երեւան, Երեւանի Պետական Համալսարանի Հրատարակչութիւն, 2011, 356 էջ:

Հայոց Յեղասպանութեան արտասահմանեան պատմագրութեան համակողմանի ուսումնասիրութիւնը հայաստանեան պատմագիտութեան կարեւուագոյն խնդիրներից է: Մեր օրերում, երբ Հայոց Յեղասպանութեան պատմութիւնը կեղծելու Եւ դրա պատմական փաստը ժխտելու փորձեր են արտուն ոչ միայն Թուրքիայում, այլև նմանատիպ Երեւյներ են արծանագրութ մի շարք արեւմտեան Երկրներում, որոնց ակտունքներուն բուրքերի կողմից վարձուած «պատմարաններ» են, այս խնդիրը ձեռք է բերում նաև քաղաքական քացառիկ կարեւորութիւն և այժմէականութիւն, քանի որ միայն պատմական իրականութեան խեղարիւրման հիմնական ուղիներն ու մերոյները քացայտելով է հնարաւոր արժանի հակահարուած տալ պատմութեան կեղծարարներին՝ պաշտպանելով այդպիսով թէ՝ բուն պատմական իրականութիւնը նրանց ուսնձգութիւններից Եւ թէ՝ տուեալ Երկրների քաղաքացիների ճշմարտութեանը հասու լինելու իրաւուքը:

Երեւանի Պետական Համալսարանի Հայագիտական Հետազոտութիւնների Ինստիտուտի աւագ գիտաշխատող, պատմական գիտութիւնների դրկտոր Վարուժան Պօղոսեանի գրախօսուուղ մենագրութիւնը կարեւոր ներդրութ է վերը նշուած խնդիրի համակողմանի հետազոտութեան ուղղութեամբ: Այն արդինք է Երկար տարիների բրտնացան և նանրակրկիտ աշխատանքի, որն աշքի է ընկնում գիտական բժախնդրութեամբ:

Մենագրութիւնը հանրագումարի է բերում Պօղոսեանի վերջին տարիներին հրատարակած մի շարք կարեւոր գիտական հետազոտութիւնները, որոնք լաւ ծանօթ են գիտական հանրութեանը Եւ իրաւամբ նպաստել են նրա որպէս փորձառու, իր գործի հնուտ գիտակ պատմարանի հեղինակութեան կայաց-մանը:

Գրախօսուուղ գրի առաջին հրատարակութիւնը լոյս է տեսէլ 2005ին¹: Ներկայ՝ Երկրորդ, բարեփոխուած Եւ լրացուած հրատարակութեան մէջ հեղի-նակն օգտագործել է մեծ բուով իրեն մինչ այդ անմատչելի նիւթեր Եւ իր պարտըն է համարել շնորհակալութիւն յայտնել իր այն գործընկերներին, որոնք իրեն օժանդակել են տարրեր Երկրների գրադարաններից դրանք ձեռք բերելու հարցում:

Հեղինակին ոչ միայն յաջողուել է նանրազնին ուսումնասիրելով ֆրամսիական պատմագրութիւնը՝ ներկայացնել նրա տարրեր ներկայացուցիչների հիմնական մօտեցումները Հայոց Յեղասպանութեան առաջին փուլի պատմութեան հիմնախնդիրների վերաբերեալ, այլև քացայայտել ֆրամսիացի մի շարք առաջատար քաղաքական, հասարակական Եւ հոգեւոր գործիչների, հոչակաւոր գրողների դիրքորոշումների Եւ գնահատականների տարրերութիւնների բուն պատճառները:

Մենագրութեան կարեւոր դրական առանձնայատկութիւններից է Պօղոս-եանի կողմից հարցերի քննարկումը տեսական ցեղասպանազիտուրեան տեսանկիւնից, ինչը, ցաւոք սրտի, հայաստանեան պատմազիտուրեան մէջ հազուադէպ երեւոյք է: Մասնաւորապէս, կարեւոր նշանակութիւն ունեն բուր-րական իշխանութիւնների որդեգրած՝ Հայոց Ցեղասպանութեան քաղաքա-կանութեան սկզբնաւորմանը վերաբերող նրա դատողութիւնները: Միանգա-նայն համոզիչ են հեղինակի հայաստումներն առ այն, որ այդ քաղաքակա-նութիւնը սկիզբ է առել դեռևս Ժթ. դարի 90ականներից: Օգտագործելով բազմաթիւ ցեղասպանազիտական բնոյրի հետազօտութիւնները, նա համոզիչ կերպով հիմնաւորում է վերը նշուած հայեցակարգային թեզը, որը Հայոց Ցե-ղասպանութեան պատմութեան վերաբերեալ գոյութիւն ունեցող բազմալեզու գրականութեան մէջ ունի ինչպէս իր կողմնակիցները, այնպէս և հակառա-կորդները: Նրա փաստարկներն ամրապնդում են իր մօտեցման կողմնակից-ների դիրքերը, շարունակելով, այդպիսով, հայաստանեան պատմագրութեան և Հայոց Ցեղասպանութեան պատմութեան ուսումնասիրութեան երախտա-ւոր, սոյն թեմայի ասպարեզում նրա ուսուցիչ ակադեմիկոս Սկրտիչ Ներսիս-եանի, սկզբնաւորած աւանդոյթը:

Միանգանայն հիմնաւորուած է և կուռ տրամաբանութեան վրայ հիմ-նուած գրքի կառուցուածքը, ինչը հնարաւորութիւն է ընձեռում հեղինակին համակրողմանի հետազօտել իր խոկ առաջարկած հիմնախնդիրները: Մասնաւորապէս, ներածութիւնում Պօղոսեանը նշում է աշխատութեան հիմնական նպատակներն ու ընդգծում իր խոկ բացայայտած գիտական մի շարք կարեւոր նորոյբներ: Վերջիններից անհրաժեշտ ենք համարում առանձնացնել նրա կողմից Հայոց Ցեղասպանութեան պատմագրութեան մէջ Ցեղասպանութեան պատմութեան ժխտողական ուղղութեան ակունքների բացայայտումը, որը միանգանայն նոր խօսք է: Մենագրութեան համապատասխան ենթագլուխը, անտարակոյս, կարեւոր ներդրում է Հայոց Ցեղասպանութեան փաստը ժխտող «պատմազիտական հետազօտութիւններ»ին արժանի, գիտական բարձր նակարդակով հակահարուած տալու գործում:

Նշենք նաև, որ հեղինակն արժանին է մատուցում իր նախորդների՝ Հա-յոց Ցեղասպանութեան պատմութեան ուսումնասիրութեան իրականացրած աշխատանքներին, ինչը, մեր կարծիքով, վկայում է ոչ միայն պատմազիտա-կան գրականութեանը հեղինակի իրազեկութեան, այլև նրա գիտական բարեհաջորդեան մասին:

Մենագրութեան առաջին գլխում, որը նուիրրուած է Հայոց Ցեղասպանութեան առաջին փուլի պատմութեան տպագիր սկզբնադրիւներին, Պօղոսեա-նը մանրամասնօրէն անդրադառնում է Ֆրանսիայի Արտարին Գործերի Նա-խարարութեան արիստիի՝ 1890ականներին հայկական կոտորածների վերա-բերեալ պաշտօնական վաերագրերն ամփոփող Դեղին Գիրք² վերլուծու-թեանը: Դրուատելի է, որ նա յատուկ ուշադրութիւն է դարձնում Դեղին Գիր-քում արտացոլուած այն նտրին, որ մահմեղական մոլուսնութիւնը կարեւոր դերակատարում է ունեցել Հայոց Ցեղասպանութեան առաջին փուլի իրակա-նացման ընթացքում (էջ 34-38):

Առաջին գլխի երկրորդ ենթագլուխը նուիրրուած է 1894-1896ի հայկական կոտորածների ընթացքն արտացոլող ֆրանսիական այլ տպագիր սկզբնադ-

բիրների քննական վերլուծութեանը: Այս առոմով մեր ուշադրութիւնը գրաւեց հեղինակի անդրադարձը հայկական կոտորածների պատմութիւնը լուսաբանող՝ Սեբաստիայում Ֆրանսիայի փոխհիպատոս Մորիս Կարլիէլ տիկնոց՝ Էմիլի Կարլիէլ օրագիրը (էջ 50-52): Հարկ է յատուկ նշել, որ տիկին Կարլիէլ հայկական կոտորածների այն եզակի ականատեսներից է, որը չի շրջանցել հայերի կրած նիւթական կորուստների հարցը: Ինչ խօսք, Կարլիէլ բերած տունալները կարիք ունեն յետազայ ճշգրտման, ինչը և իրաւացիօրէն նշում է հեղինակը (էջ 52):

Մենագրութեան երկրորդ գլուխը՝ «Հայոց Յեղասպանութեան Առաջին Փուլը Ֆրանսիական Պատմագրութեան Գնահատմամբ» խորագրով, աշխատութեան կարեւորագոյն հատուածն է: Այստեղ հեղինակը յաջորդաբար անողութանում է հետեւեալ հիմնախնդիրների քննական մեկնարաբանութեանը:

ա/ համիլեան կոտորածները 1895-1918ի ֆրանսիական պատմագրութեան լուսաբանմամբ.

բ/ Հայոց Յեղասպանութեան ֆրանսիական պատմագրութեան ժխտողական ուղղութեան սկզբնաւորումը:

Մանրանանորէն անդրադանալով այս հարցերի լուսաբանմանը եւ բազմից յղելով ֆրանսիացի հեղինակների՝ գիտական նշանակութեան առումով ոչ-համարժեք աշխատանքները, Պողոսեանն ուշադրութիւն է դարձնում նաև տեսական բնոյրի մի շարք խնդիրների հանդէալ իր մօտեցումների հիմնաւորմամբ: Այդ առումով ուշագրաւ են նրա անդրադանութերը ֆրանսիական պատմագրութեան այնպիսի կարկառուն ներկայացուցիչների աշխատութիւններին, ինչպիսիք են Ալբեր Վանդալը, Անատոլ Լերուա-Ռոլիսն, Բենար Կարայ Դը Վոն, ինչպէս նաև Ֆրանսիայի արեւելեան քաղաքականութեան խոշորագոյն հետազոտող Էդուարդ Դրիօն:

Այսպէս, օրինակ, հեղինակը նշում է, որ Դրիօն իրադարձութեան եզակի ժամանակակիցներից էր, որը խորապէս ուսումնասիրելով համիլեան վարչակարգի յանցաւոր քաղաքականութիւնը, փաստել է, որ Արդու Համիլ Բ. Բ վճռել էր «Հայկական հարցին լուծում տալ հայերին ոչնչացնելու միջոցով» (էջ 99): Այդիսով, Պողոսեանը վերոյիշեալ ֆրանսիացի պատմաբանի հետեւութիւնն օգտագործում է Հայոց Յեղասպանութեան քաղաքականութեան սկզբնաւորման վերաբերնալ իր մօտեցումը մէկ անգամ եւս հիմնաւորելու համար:

Միանգամայն ընդունելի է Պողոսեանի եզրայանգումը, թէ՝ «Փրանսիացի Հեղինակների գերակշռող մասը համիլեան կոտորածները մեկնաբանել է իրեւ պետական քաղաքականութեամբ իրականացուած իրադարձութիւն», ինչը հեղինակին հնարաւորութիւն է տուել բարձր գնահատելու նրանց ներդրութիւնը Հայոց Յեղասպանութեան առաջին փուլի պատմութեան գիտական ուսումնասիրութեան ասպարեզում (էջ 171):

Ինչպէս արդէն նշեցինք, աշխատութեան կարեւոր գիտական նորոյքներից է հեղինակի իրականացրած՝ Հայոց Յեղասպանութեան պատմագրութեան ժխտողական ուղղութեան սկզբնաւորման հարցի ուսումնասիրութիւնը: Այս խնդրին լուծում տալու նպատակով Պողոսեանը քննական վերլուծութեան է ենթարկում այդ տարիներին Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Գարրիել Հանուսոյի, Պ. Բ. Ալոշի, Ռ. Ալ Կուրտսնի, Արդոն Բուասոնի և այլոց աշխատութիւնները:

Պողոսեանը բացայայտում է նրանց հիմնական թեզերի սնանկութիւնը՝ պատմական Հայաստանի գոյութեան փաստի ժխտման, դարերից ի վեր բուրք և այլազգի ժողովուրդների կարծեցեալ խաղաղ գոյակցութեան, 1890ականներին «հայկական ապստամբութեան» վերաբերեալ: Նա գտնում է, որ հայկական կոտորածների պատմութեան փաստը «հերքող» գրականութիւնը երեան է եկել սովորան Արդու Համիդ Բ. ի պատուերով, համոզմունք յայտնում, որ ‘Է Կուրսոնի և Արդու Բուաստի տպածոները կեանքի են կոչուել 1894ի Սասունի կոտորածների հետարքնութիւնը վարած միջազգային ըննիշ յանձնաժողովի՝ 1895ին հրապարակած «Համատեղ Հաղորդագրութեան» հիմնական դրոյքները հերքելու նպատակով: Կարեւոր ենք համարում հեղինակի եզրակացութիւնն այն նասին, թէ՝ Հայոց Յեղասպանութեան պատմութեան ժամանակակից բուրք կեղծարարները «բազմիցս որդեգրել են իրենց Փրանսիացի նախորդների հիմնական թեզերը» (էջ 209):

Մենագրութեան երրորդ գլուխը նուիրուած է Հայոց Յեղասպանութեան պատմութեան առաջին փուլի ուսումնասիրութեան ասպարեզում ֆրանսիացի քաղաքական, հասարակական և հոգեւոր գործիչների, ինչպէս նաև գրողների ներդրման վերլուծութեամբ: Առանձին ներազիւում ըննութեան են առնուում բանաստեղծ և բարգմանիշ, հայ ժողովրդի արդար գործի նուիրեալ Պիեռ Ծիառի հայեացըները: Պողոսեանի վերլուծած փաստացի հարուստ նիւթը միանգամայն հիմնաւորում է նրա իսկ եզրակացութիւնն այն նասին, որ «Պիեռ Քիառը հայ ժողովրդին սատարած Փրանսիացի մտաւորականների համաստեղութեան ամէնափայլուն ներկայացուցիչն է» (էջ 277):

Կարեւոր են նաև հեղինակի դիտարկումները ժամանակի ֆրանսիացի քաղաքական, հասարակական և հոգեւոր տարբեր գործիչների նօտեցումների վերաբերեալ: Յատկանշական է, որ ցուցաբերելով գիտական պատշաճ մօտեցում, նա չի խոսափում անկողմնակալ դիրքերից գնահատելու ֆրանսիացի այն գործիչների հայեացըները, որոնք բարեացականորեն վերաբերուելով հայ ժողովրդին եւ կարենեցելով նրան՝ միաժամանակ չեն կարողացել վեր կանգնել իրենց ժամանակի առանձնայատկութիւններից: Այսպէս, օրինակ, վերլուծելով սոցիալիստական շարժման ականատը գործիշ ժամ Ժորժի հայ-նացըները Հայկական Հարցի եւ Հայոց Յեղասպանութեան պատմութեան առաջին փուլի վերաբերեալ, Պողոսեանը չի վարանու ընդգծել, որ նրա դիրք-բոշումը հայ ժողովրդի փրկութեան միջոցների ընտրութեան հարցում «խիստ չափաւոր էր» (էջ 227):

Անիրածեցտ ենք համարում նշել, որ վերջարանում տեղ գտած հեղինակի եզրայանգումները տրամարանորեն բխում են զրբում ներկայացուած եւ ըննութեան առնուած փաստացի նիւթից եւ ծեսակերպուած են ամենայն յատակութեամբ: Մասնաւորապէս, համամիտ ենք Պողոսեանի հետ այն հարցում, որ Ժ. դարի վերջի եւ Ի. դարի սկզբի ֆրանսիացի հեղինակների աշխատութիւնները Հայոց Յեղասպանութեան առաջին փուլի պատմութեան առանձնայատկութիւնների վերաբերեալ ունեն ոչ միայն կարեւոր պատմագիտական նշանակութիւն, այլ նաև արժեքաւոր սկզբնադրիր են այդ բարդ երեւոյթի պատմութեան մի շարք կարեւոր իրայատկութիւնների խորը հետազոտութեան համար եւ այս առունու ունեն գիտական ու քաղաքական անժխտելի նշանակութիւն (էջ 319-321): Չի կարելի շիամածայնուել նաև նրա այն հաւաստման հետ, որ ըննարկուած ժամանակաշրջանում՝ «Փրանսիացի հեղի-

նակները, պատմագիտական նշանակութեան առումով ոչ-համարժէք իրենց աշխատութիւններում, պատմութեան կեղծարարների թեզերին անուղղակիօրէն տալիս են հուժկու հակահարուած» (էջ 16): Հեղինակն իրաւացի է նաև փաստելով, որ նրանց «բազմազան ելոյթների ամէնագնահատելի կողմերից մէկը, անտարակոյս, հայ ժողովրդի ողբերգութեան մասին հեռաւոր իսկ պատկերացումներ չունեցող եւրոպացի ժամանակակիցներին, երբեմն գուցէն դեռեւս ոչ լիարժէք, տեղեկութիւններ հաղորդելն է» (էջ 303):

Հաճելիօրէն նշենք, որ սկզբունքային բնոյրի դիտողութիւններ Պօղոսեանի հիմնարար աշխատութեան վերաբերեալ չունենք: Վստահարար արձանագրում ենք, որ նրա մենագրութիւնը ծանրակշիռ ներդրում է Հայոց Յեղապահնութեան պատմագրութեան մէջ, առաջին խօսքը համիդիան կոտորածների ֆրանսիական պատմագրութեան ուսումնասիրութեան բնագաւառում:

Ո-ՌԵՆ ՍԱՖՐԱՍԵԱՆ

safrastyan@policy.hu

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Վարուժան Պօղոսեան, Հայոց Յեղասպանութեան Առաջին Փուլը Յրանսիական Պատմագրութեան եւ Հասարակական Մտքի Գնահատմամբ (ԺԹ. դ. վերջ-ի. դ. սկիզբ), Երեան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., 2005:

² *Documents Diplomatiques. Affaires Arméniennes. Projets de Réformes dans l'Empire Ottoman. 1893-1897.*, Paris, Imprimerie nationale, 1897; *Documents Diplomatiques. Affaires Arméniennes. (Supplément) 1895-1896.*, Paris, Imprimerie Nationale, 1897.